# ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ *

*ՀՏԴ 323.2* *DOI: 10.52063/25792652-2025.2.25-154*

**ՄԻԼԵՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ**
*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ,*
*ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն,*
*milenamkrtchyan.science@gmail.com*
*ORCID: 0009-0002-8551-6411*

***Քննելով երիտասարդության սոցիալականացման խնդիրը՝ 20-րդ դարի երկրորդ կեսին ամերիկյան քաղաքական վերլուծաբանները և սոցիոլոգներն առաջ են բերել «երիտասարդության սոցիոլոգիա» գիտական ուղղությունը: Այս գիտակարգում սահմանվել է երիտասարդության՝ որպես ինքնուրույն սոցիալական խմբի գիտականորեն համակարգված ըմբռնումը: Այն նպաստել է բացահայտելու հասարակություն-պետություն փոխհարաբերություններում երիտասարդության դերը, արժեքային բազմաչափությունը, սոցիալականացման մեխանիզմները, վարքաբանական առանձնահատկությունները և առաջնորդության հրամայականները: Քննելով երիտասարդության քաղաքական առաջնորդության ժամանակակից միտումները՝ արձանագրում ենք, որ երիտասարդ առաջնորդները ստանձնում են սեփական երկրի ապագայի հանդեպ սերնդային պատասխանատվություն և պետության ապագայի քաղաքականության մշակման ռազմավարական դերակատարում:***

***Շարունակական թվային փոխակերպումների և աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում առանցքային է երիտասարդ առաջնորդների նոր սերնդի քաղաքագիտական հետազոտումը: Հոդվածի նպատակն է քննել երիտասարդության առաջնորդության ինստիտուտի կայացման հիմնախնդիրը՝ որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման մեխանիզմ: Հետազոտության հիմքում առաջնորդության դասական տեսություններն են՝ ժամանակակից մեկնաբանմամբ, ինչպես նաև քաղաքական դերակատարների մարդաբանական դասակարգումը: Երիտասարդ առաջնորդները գործում են հիբրիդային քաղաքական միջավայրում՝ ավանդական ինստիտուտների և քաղաքական ցանցային կառավարման պայմաններում: Ուստի՝ հոդվածում կարևորվում է երիտասարդ առաջնորդների համակարգային և ռազմավարական մտածողությունը: Հետազոտման արդյունքները ցույց են տալիս, որ առաջնորդների նոր սերնդի կայացումն արտացոլում է արդիականացման գործընթացի ներքին օրինաչափությունները՝ անցումն անձնակենտրոն առաջնորդումից դեպի մասնակցային, ցանցային և արժեքահեն կառավարման մոդելներ: ՀՀ-ում երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացումը նպաստում է քաղաքական զարգացման հիմքերի կայունությանը և ապագայի հանդեպ վստահության ձևավորմանը:***

* Հոդվածը ներկայացվել է 03.08.2025թ., գրախոսվել՝ 17.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

**Հիմնաբառեր՝** *քաղաքական զարգացում, երիտասարդություն, առաջնորդություն, կառավարում, երիտասարդ առաջնորդների նոր սերունդ, երիտասարդության սոցիոլոգիա, սոցիալականացում:*

## Ներածություն

Արագընթաց թվային փոփոխությունները, աշխարհաքաղաքական տուրբուլենտ գործընթացները և ցանցային տեխնոլոգիաներն առաջացնում են սոցիալ-մշակութային, ժողովրդագրական և կառավարման մի շարք խնդիրներ: Այս ընթացքում քաղաքական ինստիտուտները, հատկապես՝ զարգացող և անցումային երկրներում, բախվում են նոր և լուրջ մարտահրավերների, այդ թվում՝ վստահության ճգնաժամի: Ավանդական քաղաքական ինստիտուտների և նոր քաղաքականությունների միջև գտնվելով՝ երիտասարդ առաջնորդների նոր սերունդը դառնում է պետության քաղաքական զարգացման դերակատար: Համադրելով սիներգետիկայի և կոնվերգենցիայի սկզբունքները՝ երիտասարդ առաջնորդների նոր սերնդի ներկայացուցիչները դառնում են ավանդականի և նորի, լոկալի և գլոբալի միջև սահուն սինթեզ իրականացնողներ և բնականոն քաղաքական արդիականացման երաշխավորներ: Արդյունքում, երիտասարդ առաջնորդները համակարգային տուրբուլենտության պայմաններում ոչ միայն հիմք են ստեղծում ինքնահիրացման և կայուն զարգացման համար, այլև հայտ են ներկայացնում սեփական նորարարական ներուժով ամրապնդելու ժողովրդավարական մեխանիզմները՝ նպաստելով երկրի քաղաքական զարգացմանը: Երիտասարդ առաջնորդների կայացումը ոչ միայն քաղաքական զարգացման առանցքային բաղադրիչ է, այլև վստահության ճգնաժամի հաղթահարման մեխանիզմ՝ լեգիտիմության նոր և ամուր հիմքով: Արձանագրենք, որ վերոշարադրյալը չի պարտադրում քաղաքական ինստիտուտներում և պետական համակարգում կադրերի մեխանիկական սերնդափոխություն և երիտասարդացում, այլ ենթադրում է քաղաքական մասնակցության վերաիմաստավորում՝ ի նպաստ պետության քաղաքական զարգացման:

Ժամանակակից վերոնշյալ մարտահրավերներից զատ՝ թեմայի **արդիականությունը** հիմնավորում ենք նաև քաղաքական զարգացման գործընթացում երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացման նպատակադրմամբ: Երիտասարդ առաջնորդների կայացումը պետության համար ռազմավարական նշանակություն ունի առանցքային երկու առումով: Առաջին՝ որպես հեռանկարային քաղաքականությունների, ռազմավարությունների ձևավորման, իրագործման ակտիվ դերակատար և կայուն զարգացման գաղափարների կրող ու տարածող: Երկրորդ՝ որպես պետության և հասարակության միջև փոխազդեցության արդյունավետության բարձրացման էական գործոն: Բացի այդ, երիտասարդ առաջնորդների նոր սերունդը քաղաքակրթական արդիականացման արժեքների կրողն է և տարածողը:

ՀՀ-ում երիտասարդ առաջնորդները գործուն դերակատարում ունեն նաև գլոբալ քաղաքական զարգացումների, քաղաքականությունների իրականացման միջազգային լավագույն փորձի տեղայնացման առումով: Նրանք ունակ են փոխադրելու գլոբալ արժեքները և նորարարական մոտեցումները՝ հաշվի առնելով լոկալ պատմամշակութային, էթնիկական, սոցիալ-մշակութային, տնտեսական և տարածաշրջանային առանձնահատկությունները: Արժեշահային տեսանկյունից երիտասարդ առաջնորդների գործողությունները պետք է լինեն պետականամետ և անկախ վերազգային ազդեցություններից: Քաղաքական զարգացման գործընթացներում երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացումը առանցքային նշանակություն ունի, քանի որ ենթադրում է քաղաքականության մեջ երիտասարդների «խորհրդանշական» ներկայացվածությունից համակարգային և բնականոն անցում դեպի մրցունակ երիտասարդների գործուն դերակատարում երկրի

քաղաքական և քաղաքացիական գործընթացներում՝ ի շահ պետության զարգացման և սեփական երկրում ինքնահիրացման:

Սույն գիտական հոդվածի **նպատակն** է դիտարկել երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացումը՝ որպես քաղաքական զարգացման ներուժ: Պետության քաղաքական զարգացման համատեքստում երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացման բազմաշերտ հիմնախնդիրն անհրաժեշտ է հետազոտել քաղաքագիտական տեսամեթոդաբանական հիմքի, երիտասարդության սոցիոլոգիայի և միջգիտական շրջանակի համադրմամբ: «Երիտասարդության սոցիոլոգիան միջառարկայական գիտություն է, որը թույլ է տալիս համալիր կերպով ուսումնասիրել «երիտասարդություն» երևույթը, երիտասարդության դիրքի և դերի բնութագրերը հասարակությունում՝ հաշվի առնելով միջգիտակարգային նվաճումները» (Лень́кова 24): Դիտարկվել են հոգեբանական, վարքաբանական, մշակութային, թվային, ցանցային, վիրտուալ, հաղորդակցական փոխազդեցությունները: Ուշադրության առանցքում են նաև երիտասարդության ինքնության առանձնահատկությունները, քաղաքական մասնակցության, ներառման և ինքնաներառման մեխանիզմները (օրինակ՝ թվային ակտիվիզմը, քրաուդսորսինգը և նորարարական այլ ձևեր):

Գիտական հետազոտության շրջանակում **խնդիր է դրվել**, ուսումնասիրելով առաջնորդության տեսական հիմքերը, վերլուծել թվային դարաշրջանում երիտասարդ առաջնորդների կայացման խնդիրը և նրանց դերակատարումը պետության քաղաքական զարգացման գործընթացում: Վերհանվել են արհեստական բանականության ժամանակներում երիտասարդ առաջնորդների հիմնական հատկանիշները, կարողությունները, հմտությունները:

## Գրականության ակնարկ

Քաղաքական առաջնորդությունը պատմական և աշխարհաքաղաքական տարբեր շրջափուլերում հետազոտվել է մի շարք տեսաբանների կողմից: Առաջնորդների ընտրության համար Պլատոնը հասարակությունը բաժանում էր դասերի, սահմանում «ոսկե արյան տեր» լինելու պայմանները: Ն.Մաքիավելին ընդգծում էր տիրակալի առաջնորդման կերպը: Գ.Լեբոնը առաջնորդությունը դիտարկում էր «առաջնորդ-զանգված» հարաբերությունների շրջանակում: Է.Ֆրոմը առաջ էր բերում առաջնորդների իր տիպաբանությունը (Մարգարյան, Քաղաքական լիդերություն 138): Այս և այլ տեսաբանների կողմից քննվել և յուրովի վերարժևորվել է անհատի դերակատարումը քաղաքական գործընթացներում: Այնուհանդերձ, աշխարհաքաղաքական նոր կարգը, ցանցային կառավարման և թվային, վիրտուալ մասնակցության նոր ձևերը առաջ են բերում առաջնորդության նոր առանձնահատկություններ:

Դիտարկենք Մ. Վեբերի կողմից առաջարկված լեգիտիմ առաջնորդության դասական երեք տիպերը՝ (Вебер 644-707) ժամանակակից երիտասարդ առաջնորդների կայացման համատեքստում: Այսպիսով՝ Մ.Վեբերն առանձնացնում էր լեգիտիմ առաջնորդների երեք իդեալական տիպ՝ ավանդական, խարիզմատիկ և ռացիոնալ-իրավական: Վիրտուալ և թվային տեխնոլոգիաների, ցանցային հաղորդակցման դարաշրջանում այս տիպերը երիտասարդ առաջնորդների կայացման գործընթացում պահպանում են դասական հիմքերը՝ ենթարկվելով առաջնորդման մեխանիզմների որոշակի փոխակերպումների: Այսպես՝ մշակութային և տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված՝ որոշ երկրներում ձևավորվում են վեբերյան ավանդական տիպի երիտասարդ առաջնորդներ: Այնուամենայնիվ, առաջնորդի ավանդական տեսակն ունի ժամանակակից պայմաններին համահունչ վերաիմաստավորման կարիք: Ի տարբերություն առաջնորդի ավանդական տիպի՝ Մ.Վեբերի խարիզմատիկ տեսակը պահպանում է ազդեցիկությունը: Վեբերյան դասական հատկանիշներով խարիզմատիկ առաջնորդը ժամանակակից քաղաքական տարածության մեջ

ստանում է զարգացման բարենպաստ նոր միջավայր՝ ինքնաիրացման նորարարական գործիքակազմ, զարգացման լայն հեռանկարներ: Երիտասարդ խարիզմատիկ առաջնորդը պետք է կարևորի թվային լեգիտիմությունը, այդ թվում՝ մեդիակերպարի ձևավորումը և կայացումը, գաղափարակից համայնքի համախմբումը և առաջնորդումը թե՛ իրական և թե՛ վիրտուալ կյանքում: Թվային տեխնոլոգիաները, մեդիան, սոցիալական ցանցերը, բլոգինգը, «կարծիքի առաջնորդությունը», անձնական բրենդի ստեղծումը խարիզմատիկ երիտասարդ առաջնորդներին տալիս են հանրության հետ հաղորդակցման, գաղափարների առաջմղման, հանրային կարծիքի ձևավորման և զանգվածների առաջնորդման յուրատեսակ հնարավորություններ: Անդրադառնալով Մ.Վեբերի ռացիոնալ-իրավական առաջնորդների դասական տիպին՝ արձանագրենք, որ այն շարունակում է լինել հնստիտուցիոնալ քաղաքական առաջնորդման հիմնական ձև: Ռացիոնալ-իրավական առաջնորդները զարգանում են քաղաքական կուսակցությունների դպրոցներում, երիտասարդական խորհրդարաններում և այլն: Այնուհանդերձ, թվային ակտիվիզմի նոր ձևերը և քաղաքացիական մասնակցության մեխանիզմները որոշակիորեն մարտահրավեր են նետում դասական այս մոտեցմանը, ինչը հանգեցնում է բյուրոկրատական մոտեցումներով երիտասարդ առաջնորդների ձևավորման գործընթացի փոխակերպմանը և ճկունության խթանմանը:

Նեովեբերյան մոտեցումն առաջարկում է առաջնորդության նոր մեկնաբանություններ: Խարիզման համադրվում է ինստիտուցիոնալ և մասնակցային քաղաքականության հետ: Երիտասարդ առաջնորդները, ստանձնելով քաղաքական, մշակութային և սոցիալական պատասխանատվություն, կարող են ուղղորդել հանրային գիտակցությունը և մասնակցել որոշումների կայացմանը՝ ներկայում արվող գործողությունները համապատասխանեցնելով ապագայի քաղաքական օրակարգին:

Ուշադրություն հրավիրենք տրանսֆորմացիոն առաջնորդության տեսությանը, որը համահունչ է երիտասարդ առաջնորդների նոր սերնդին: Տրանսֆորմացիոն առաջնորդության շնորհիվ տեղի է ունենում թե՛ առաջնորդի և թե՛ նրա հետևորդների մարդկային-բարոյական նորմերի, վարքագծի, գիտակցության, էթիկական ձգտումների բարելավում (Burns 33): Փոխադարձ կապի և երկկողմ հաղորդակցության այս մոդելը ենթադրում է առաջնորդ-զանգված երկկողմ զարգացում, փոխակերպում, արժեքահեն երկարաժամկետ տեսլականի ձևավորում և պահպանում, այլ ոչ թե իշխանության մեխանիկական պարտադրում և ակնհայտ վերահսկողություն: Տեսությունն ընդգծում է քաղաքական իշխանության արժեքային հիմքերի, հանրային վստահության և շարունակական ինքնակատարելագործման անհրաժեշտությունը: Երիտասարդ առաջնորդը, լինելով փոխակերպման կառուցողական նախաձեռնող, դառնում է քաղաքական մասնակցության, ժողովրդավարական սկզբունքների, ներառականության և սոցիալական արդարության ժամանակակից առաջամարտիկ:

Ամփոփենք. երիտասարդ առաջնորդների նոր սերնդի ձևավորման խնդիրը առանցքային է գլոբալ քաղաքական փոխակերպումների համատեքստում: Առաջնորդության դասական տեսությունները հիմք ընդունելով՝ ձևավորվում են առաջնորդման ժամանակակից տեսություններ և մոտեցումներ՝ **նոր ժամանակներ-նոր առաջնորդներ** հարատև սկզբունքով:

## Երիտասարդության քաղաքական մասնակցության էվոլյուցիան ՀՀ-ում

Սերնդային կերպափոխումների համակարգային ուսումնասիրման համար դիտարկենք սոցիալ-մշակութային դասակարգման մոտեցումը: 20-րդ դարի երկրորդ կեսին հանրայնացվել է «սերունդների ցիկլեր»-ի տեսությունը: Այն սերունդներին բնորոշ հատկանիշները պայմանավորում է այն պատմական և սոցիալական ժամանակաշրջանով, որում անցել է նրանց անհատականության ձևավորումը՝ մանկություն, պատանեկություն, երիտասարդություն և այլն: Ամերիկյան

տեսաբաններն առանձնացրել են սերունդների արքետիպեր, որոնք հաջորդաբար կրկնվում են պատմության ընթացքում՝ «Զարթոնքի», «Անկման», «Ճգնաժամի» և «Վերելքի» փուլերում (Strauss, Howe, 97-102): Ժամանակի ընթացքում որոշակիացված սերունդների տարանջատումը («Baby Boomers», «Generation X», «Millennials» (Generation Y), «Homeland Generation» (ավելի ուշ՝ «Gen Z»)) զարգացվել է, և այսօր արդեն առաջ է եկել նոր «Gen Alpha»-ն: Սերունդների կերպափոխումն ազդեցություն է կրում տեխնոլոգիական առաջընթացից, գլոբալ-գլոկալ-լոկալ պատմական, քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային իրողություններից:

Տարբեր սերունդների երիտասարդ ներկայացուցիչներն իրենց մասնակցությունն են ունեցել հայաստանյան քաղաքական կյանքի տարբեր փուլերում: Օրինակ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո երիտասարդները մասնակցել են Արցախյան ազատամարտին, քաղաքական և ազգային շարժումներին: Անկախության հռչակումից ի վեր՝ երիտասարդության քաղաքական սոցիալականացումն ընթացել է քաղաքական-հասարակական անկայունության պայմաններում և փորձի-սխալի հարացույցի շրջանակում: Այս ամենը զուգորդվել է անվտանգային հիմնախնդիրներով, ինչը խոչընդոտել է երիտասարդության բնականոն սոցիալականացմանը:

Այնուհետև, 2000-ականներին միջազգային համայնքին ինտեգրման գործընթացների շնորհիվ ընդլայնվել են կրթական և քաղաքական ակտիվության հնարավորությունները: Ըստ Ռ.Ինգլհարթի հետմատերիալիստական արժեքների հաեցակարգի՝ հիմնարար նյութական կարիքների բավարարմանը զուգընթաց (օր.՝ անվտանգություն), զարգանում է ավելի բարձր արժեքներ իրացնելու ցանկություն (օր.՝ ազատություն, բնապահպանական ակտիվություն և այլն (Inglehart 3, 21-24): Այս ընթացքում երիտասարդների քաղաքական առաջնորդությունը զարգացվել է հիմնականում կուսակցությունների երիտասարդական թևերի շրջանում և հասարակական կազմակերպությունների միջոցով: Հասարակական կազմակերպությունների զարգացմանը զուգահեռ ավելացել են նաև միջազգային դրամաշնորհները և փոխանակման ծրագրերը: 2010-ականներին իրականացված բողոքի տարբեր ցույցերում մեծ էր երիտասարդության ներգրավվածությունը: 2018 թվականի Թավշյա հեղափոխության շրջանում երիտասարդությունը քաղաքական փոփոխությունների մասնակից էր՝ ձգտելով ժողովրդավարական արժեքների հաստատման և քաղաքական մասնակցության: 2020-ին «Covid-19» համավարակը, Արցախյան երկրորդ պատերազմը և տարածաշրջանային անկայունությունը նոր մարտահրավերներ ստեղծեցին երիտասարդության համար: 44-օրյա պատերազմից և հետագա քաղաքական ցնցումներից հետո անվտանգային հիմնախնդիրները կրկին ընդլայնվեցին: Երիտասարդության քաղաքական սպասումների չիրականացումը հանգեցրեց վստահության կորստի, արդյունքում նաև ապատիայի: Սակայն, ճգնաժամը բերում է նաև նոր հնարավորություններ. «մարդը հնարավորություն է ստանում ոչ միայն դիմակայելու անորոշություններին, այլև հաղթելու դժվարությունները՝ կերտելով իրեն և՛ որպես կենսունակ ֆիզիկական էակ, և՛ որպես հանրային համակեցության պատասխանատու քաղաքացի» (Մարգարյան 119):

Քննելու համար երիտասարդների առաջնորդության ներկայիս իրավիճակը և զարգացման միտումները՝ դիտարկենք «GenZ» (համարվում են 1997-2010թթ. ծնվածները) և «Gen Alpha» (2010թ.-ից ի վեր ծնվածները) սերունդները: Համեմատական վերլուծություն իրականացնելով՝ արձանագրում ենք, որ եթե «Gen Z» սերնդի ներկայացուցիչները ձևավորվել են համացանցի, գաջեթների և սոցիալական ցանցերի տարածման ժամանակահատվածում, ապա «Gen Alpha»-ն ծնվել, ապրում և ձևավորման փուլերն անցնում է լիարժեքորեն հասանելի վիրտուալ միջավայրի և թվային մատչելի գործիքների, այդ թվում՝ արհեստական բանականության պայմաններում: Այս սերունդների ներկայացուցիչները, որոնք երիտասարդ առաջնորդ լինելու հիմնական հավակնորդներն են, սմարթֆոնների, այլ գաջեթների, սոցիալական

ցանցերի («Facebook» («Meta»), «Instagram», «TikTok» և այլն), առցանց, վիրտուալ խաղերի և թվային հարթակների ակտիվ օգտատերեր են: Նրանք հետևում, մասնակցում, նախաձեռնում են տարբեր արշավներ՝ քաղաքականից մինչև սոցիալական և բարեգործական, հանդես են գալիս որպես մեդիա-անհատ՝ ոչ միայն որպես մեդիասպառող, այլև տեղեկատվություն ստեղծող և տարածող: Նրանք ցուցաբերում են առաջնորդության յուրահատուկ մոտեցում՝ օգտագործելով սոցիալական մեդիա հարթակները ցանցեր կառուցելու, գաղափարներ տարածելու, համախմբելու և ոգեշնչելու համար: Այս ամենը վերափոխում է ավանդական առաջնորդության մոդելները՝ օգտագործելով թվային գործիքներ և առցանց փոխազդեցություններ, որոնք նաև «կարող են օգնել սերունդների միջև համագործակցությանը» (Hidayat, Utama Tjandra, Herawati, Simanjuntak 69): Քննելով «GenZ»-ի և «Gen Alpha»-ի քաղաքական և քաղաքացիական ակտիվության նախադրյալները՝ առանձնացնում ենք «թվային քաղաքացի» լինելու հանգամանքը, ինչից բխում է նաև հիբրիդային թվային կառավարման հարթակների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը՝ նոր սերնդի երիտասարդների քաղաքական մասնակցությունը և քաղաքացիական ներգրավվածությունը խթանելու, արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ամփոփելով այս ժամանակագրությունը և վերլուծությունը՝ արձանագրում ենք, որ ՀՀ-ում երիտասարդական քաղաքական առաջնորդության էվոլյուցիան արտացոլում է երկրի ողջ քաղաքական համակարգի դինամիկան՝ ազգային ինքնության ձևավորումից և անկախության համար պայքարին մասնակցությունից մինչև ակտիվ քաղաքական շարժումներ, տեխնոլոգիական առաջընթաց և քաղաքացիական մասնակցության նոր ձևեր: Ռ.Ինգլհարթի արժեքային տեսության միջոցով իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդների քաղաքական մասնակցության էությունը պայմանավորվում է արժեքներով: Այս տեսանկյունից կարևորվում է պետության համակարգային երիտասարդական քաղաքականության իրականացումը՝ կրթական ապահով միջավայրի ապահովումից մինչև կայուն քաղաքական զարգացման ինստիտուցիոնալ երաշխիքներ: Ավելին, քաղաքական գիտելիքներից զատ՝ երիտասարդության քաղաքական մասնակցության գործում էական է վստահությունն ու հավատը այն ժողովրդավարության արդյունավետության նկատմամբ, որում նա ապրում է (Bacalso, Bárta, Moxon 73): Այսպիսով՝ պետության ներսում երիտասարդների կյանքի, ինքնիրացման և զարգացման բարենպաստ միջավայր ստեղծելով՝ ժողովրդավարական արժեքները հնարավոր է դարձնել երիտասարդ նոր առաջնորդների քաղաքական մասնակցության շարժիչ:

## Երիտասարդ առաջնորդները՝ քաղաքական զարգացման դերակատար

Երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացման նախապայմանն է երիտասարդության քաղաքական սոցիալականացումը: Այն դարձնում է երիտասարդին քաղաքական մշակույթի կրող, ձևավորում է նրա քաղաքական գիտակցությունը, քաղաքական, քաղաքացիական ինքնությունները: Այս ամենը երիտասարդների քաղաքական վարքաբանության հիմքն է: Երիտասարդների համար «առաջնորդությունն ընկալվում է որպես ճանապարհ, որը ներառում է երեք մեխանիզմ՝ իմացության ձևավորում (իրավիճակը հասկանալու կարողություն), գործողություն և վերլուծում» (Karagianni, Lainidi, Montgomery 206-229): Նոր սերնդի երիտասարդ առաջնորդը, որը հայտ է ներկայացնում լինելու ակտիվ դերակատար քաղաքական տարածությունում, իր քաղաքական վարքագծով ոչ միայն արձագանքում և մասնակցում է քաղաքական գործընթացներին, այլև ինքն է հանդես գալիս որպես քաղաքական նախաձեռնող:

Երիտասարդ քաղաքական առաջնորդները ձևավորվում են արտաքին և ներքին տարբեր գործոնների ազդեցությամբ: Օրինակ, եթե արտաքին գործոն է երկրի քաղաքական ռեժիմը, ավանդական ինստիտուտների կայացվածության աստիճանը, ռազմավարական էլիտայի առկայությունը, կրթության որակը, ապա ներքին գործոններից են անհատի ինքնությունը, արժեշահային համակարգը, մոտիվացիան: Երիտասարդ առաջնորդների սոցիալ-հոգեբանական պատրաստության կարևոր մաս է դրական, կենսունակ «Եսի» ձևավորման և անձնական ինքնորոշման, սոցիալական լավատեսության կառուցողական դիրքորոշման պայմանների ստեղծումը (Пономарев, Ланцев, Кырчиков 60): Երիտասարդ առաջնորդների նոր սերնդին անհրաժեշտ է սոցիալական առաքելության հստակ գիտակցում, տրիվիալ պատասխանատու վարքագիծ, հանրային շահի կարևորում, ինչպես նաև ինքնահրացում և ինքնադրսևորում կարիերայում: Արհեստական բանականության և թվային տեխնոլոգիաների դարաշրջանում երիտասարդ առաջնորդների նոր սերնդին անհրաժեշտ է մրցունակ կրթություն, կարողությունների և հմտությունների համախումբ: Գիտելիքների և կարողությունների ամբողջությունը ներառում է մեդիագրագիտություն, «փափուկ» հմտություններ (օր.՝ կոնֆլիկտների կառավարում, քննադատական մտածողություն, ժամանակի կառավարում, թիմային աշխատանք): Կարևոր նշանակություն ունեն նաև երիտասարդ առաջնորդների զգայական և հուզական ընդունակությունները (Goleman 82-91): Առաջնորդության խթանման կրթական մոտեցում բնութագրվում է նաև ընդօրինակման արժանի օրինակների ապահովմամբ (Md Rami, Ismail, Arshad, Zulkifly 2024): Տարբեր են առաջնորդման ոճերը, սակայն նոր սերդնի երիտասարդ առաջնորդների առավելություն է ճկուն մտածողությունը և ստեղծարարությունը, ինչը օգնում է զուգամիտել տարբեր ոճեր և տրանսֆորմացնել դրանք՝ ըստ անհրաժեշտության:

Երիտասարդ, նոր առաջնորդների կայացումը քաղաքական զարգացման մեջ ամբողջականորեն ներկայացնելու համար՝ անդրադառնանք նաև անթրոպոլոգիական մեկ այլ արդի մոտեցման: Լինելով զարգացող «Homo politicus»՝ երիտասարդ անհատը «ունակ է ադեկվատ կողմնորոշվելու քաղաքական տարածությունում, ճիշտ որոշակիացնելու իր տեղը քաղաքական հարաբերությունների համակարգում» (Пушкарева 6): Քննելով երիտասարդ առաջնորդների «Homo politicus» էությունը՝ զուգամիտենք այն քաղաքական դերակատարների դասակարգման «Homo hybridus» տիպի հետ: Սոցիալ-քաղաքական սուբյեկտի այս տեսակը՝ իր հիբրիդային վարքաբանությամբ, մտածողությամբ և մասնակցությամբ, բնորոշ է երիտասարդ առաջնորդների նոր սերնդին: Ապրող և արարող անհատը մեկտեղում է վիրտուալ և իրական կյանքը: Այսպիսով՝ «Homo hybridus»-ը ամբողջացնում է իր քաղաքական մասնակցությունը՝ գործելով թե՛ իրական և թե՛ վիրտուալ տիրույթներում:

Հանրագումարենք. նոր սերնդի երիտասարդ առաջնորդները պարզապես քաղաքական սուբյեկտ չեն: Նրանք քաղաքական մարդաբանության նոր տիպի և նոր որակի քաղաքական դերակատարներ են: Գործելով որպես «Homo hybridus»՝ ճկուն, ցանցային դերակատարներ, նրանք աչքի են ընկնում ռազմավարական մտածողությամբ, փոխում են քաղաքական-քաղաքացիական ակտիվության կերպը, ինչպես նաև հասարակություն-պետություն փոխհարաբերությունների որակը:

## Եզրահանգումներ

Ժամանակակից գլոբալ, գլոկալ և լոկալ փոխակերպումների տուրբուլենտ դարաշրջանում վերաիմաստավորվում են արժեքային համակարգերը, և ձևավորվում են երիտասարդ, նոր առաջնորդներ: Ռազմավարական մտածողությամբ երիտասարդ առաջնորդները դառնում են քաղաքական զարգացման կարևոր դերակատարներ:

Երիտասարդ առաջնորդների քաղաքական արդյունավետ մասնակցության համար կարևոր է երիտասարդության՝ իրականության նկատմամբ հավասարարժեք հարմարեցումը՝ ադապտացիան: Միևնույն ժամանակ, երիտասարդության

պյուրալիստական՝ այլընտրանքային, հնարավորությունները պետք է ոչ թե հակադրվեն, այլ փոխլրացնեն միմյանց՝ հանգեցնելով համակեցության նորմերի պահպանման տիրույթում երկրի ապագայի քաղաքականության մշակմանը:

Երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացումը առանցքային նշանակություն ունի ՀՀ քաղաքական զարգացման գործընթացում: Երիտասարդների քաղաքական, քաղաքացիական ակտիվության, որոշումների կայացման գործընթացին մասնակցության, համայնքային խնդիրների վերհանման և լուծման, նախաձեռնողականության աջակցումը միտված է երիտասարդ առաջնորդների նոր սերնդի կայացմանը: Պետության կողմից երիտասարդ առաջնորդների զարգացման շարունակական խթանումը ապագայամետ ռազմավարական քաղաքականություն է: Ճգնաժամերից դեպի կայուն ժողովրդավարական կառավարում անցումն անհրաժեշտ է իրականացնել պետության ներսում՝ անվտանգության ընդարձակված օրակարգին զուգահեռ՝ ամրապնդելով քաղաքական և քաղաքացիական ինստիտուտները և ապահովելով կայուն միջավայր, որը կնպաստի երիտասարդ առաջնորդների նոր սերնդի շարունակական զարգացմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Մարգարյան Մարիամ, *Խաղերի տեսություն. ինչպես դառնալ առաջնորդ.* Պետական ծառայություն, 2024:
2. Մարգարյան Մարիամ, *Քաղաքական լիդերություն.* ՀՀ ՊԿԱ, 2017:
3. Вебер Макс, *Политика как призвание и профессия.* Прогресс, 1990.
4. Леньков Роман, *Социология молодежи.* Юрайт, 2025.
5. Пономарев Александр, Ланцев Артем, Кырчиков Максим, *Лидерство в молодежной среде.* Урал. ун-та, 2020.
6. Пушкарева Галина, *Homo Politicus: человек политический.* Аргамак-Медиа, 2014:
7. Bacalso Cristina, Bárta Ondřej, Moxon Dan, *Youth Political Participation: Literature and Policy Review 1980-2023.* Youth Democracy Cohort, 2024.
8. Burns James MacGregor, *Leadership.* Open Road Media, 2012.
9. Goleman Daniel, *What Makes a Leader?.* Harvard Business Review, 2004.
10. Hidayat Debra, Utama Tjandra Evan, Herawati Nani, Simanjuntak Manlian Ronald A., *Gen Z Digital Leadership through Social Media*. *Widyakala Journal, Vol. 10, pp. 62-71,* 2023.
11. Inglehart Ronald. *The Silent Revolution: Changing Values and Political Styles Among Western Publics*. Princeton University Press, 1977.
12. Karagianni Despoina, Lainidi Olga, Montgomery Anthony, *Charting the Journey of Young Leaders A New Model of Transferability of Skills,* 2023.
13. Md Rami Ahmad Aizuddin, Ismail Ismi Arif, Arshad Mohd Mursyid, Zulkifly Nurul Afiqah, *Expanding Views of Youth Leadership: The Key Attributes Contributing to the Success of Youth Leadership,* 2024.
14. Strauss William, Howe Neil, *Generations: the history of America's future*, *1584 to 2069.* New York, 1991.


## WORKS CITED


1. Margaryan Mariam, Xagheri tesut'yun. inchpes dar'nal ar'ajnord, [Game Theory: How to Become a Leader], Petakan c'ar'ayut'yun, 2024 (in Armenian).
2. Margaryan Mariam, Qaghaqakan liderut'yun, [Political Leadership], HH PKA, 2017 (in Armenian).
3. Veber Maks, Politika kak prizvanie i professija, [Politics as a Vocation and Profession], Progress, 1990 (in Russian).

4. Len'kov Roman, Sociologija molodezhi, [Sociology of Youth], Jurajt, 2025 (in Russian).
5. Ponomarev Aleksandr, Lancev Artem, Kyrchikov Maksim, Liderstvo v molodezhnoj srede, [Leadership Among Youth] Ural. un-ta, 2020 (in Russian).
6. Pushkareva Galina, Homo Politicus: chelovek politicheskij, Argamak-Media, [Homo Politicus: Political Man], 2014 (in Russian).

## THE FORMATION OF A NEW GENERATION OF YOUNG LEADERS IN THE POLITICAL DEVELOPMENT PROCESS OF THE REPUBLIC OF ARMENIA

**MILENA MKRTCHYAN**
*Academy of Public Administration of the Republic of Armenia,*
*Department of Psychology and Political Science, Ph.D. Student,*
*Yerevan, the Republic of Armenia*

In the second half of the 20th century, American political analysts and sociologists, in addressing the issue of youth socialization, introduced a new scholarly direction known as the sociology of youth. Within this academic framework, youth has been conceptualized as an autonomous social group, grounded in a systematized and scientific understanding. This field has contributed to a deeper exploration of the role of youth in the interplay between society and the state, the multidimensional nature of youth values, mechanisms of socialization, behavioral specificities and imperatives of leadership. By examining contemporary trends in youth political leadership, it is evident that young leaders assume generational responsibility for their country's future and play a strategic role in shaping the political agenda of the state.

In the context of ongoing digital transformations and global geopolitical instability, the political science study of a new generation of young leaders emerges as a critical area of inquiry. The aim of the article is to examine the issue of establishing the institution of youth leadership as a mechanism for overcoming crises of political development. This research is grounded in classical theories of leadership reinterpreted through a contemporary lens, alongside the anthropological categorization of political actors. Young leaders operate in a hybrid political environment characterized by the coexistence of traditional institutions and network-based modes of political governance. Therefore, the article emphasizes the importance of systemic and strategic thinking among young leaders.The findings of the research indicate that the formation of a new generation of young leaders reflects the internal dynamics of the modernization process-a transition from personality-centered leadership models to participatory, networked, and value-driven forms of governance. The emergence of a new generation of young leaders in the RA contributes to the stabilization of the foundations of political development and fosters trust toward the future.

**Keywords:** *Political development, youth, leadership, governance, new generation of young leaders, youth sociology, socialization.*

# ФОРМИРОВАНИЕ НОВОГО ПОКОЛЕНИЯ МОЛОДЫХ ЛИДЕРОВ В ПРОЦЕССЕ ПОЛИТИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**МИЛЕНА МКРТЧЯН**
*аспирант кафедры психологии и политологии*
*Академии государственного управления Республики Армения,*
*г. Ереван, Республика Армения*

Во второй половине XX века американские политические аналитики и социологи, исследуя проблему социализации молодежи, сформировали новое научное направление – социология молодежи. В рамках данной научной дисциплины понятие «молодежь» было концептуализировано как самостоятельная социальная группа, обладающая системой научно обоснованных характеристик. Это способствовало выявлению роли молодежи во взаимодействии общества и государства, многомерности молодежных ценностных ориентаций, механизмов социализации, поведенческих особенностей и императивов лидерства. Анализируя современные тенденции молодежного политического лидерства, мы фиксируем, что молодые лидеры принимают на себя поколенческую ответственность за будущее своей страны и играют стратегическую роль в формировании политической повестки будущего государства.

В условиях непрерывных цифровых трансформаций и нарастающей геополитической нестабильности особую значимость приобретает исследование нового поколения молодых лидеров в политологическом аспекте. Цель данной статьи заключается в рассмотрении проблемы формирования института молодежного лидерства как механизма преодоления кризисов политического развития. Основу данного исследования составляют классические теории лидерства в их современном прочтении, а также антропологическая классификация политических акторов. Молодые лидеры действуют в гибридной политической среде, сочетающей элементы традиционных институтов и сетевых форм политического управления. В связи с этим в статье акцентируется внимание на необходимости системного и стратегического мышления у молодых лидеров. Результаты исследования показывают, что формирование нового поколения лидеров отражает внутренние закономерности процесса модернизации – перехода от персонифицированных моделей лидерства к партисипативным, сетевым и ценностно-ориентированным моделям управления. Формирование нового поколения молодых лидеров в РА способствует укреплению основ политического развития и формированию общественного доверия к будущему.

**Ключевые слова:** *политическое развитие, молодежь, лидерство, управление, новое поколение молодых лидеров, социология молодежи, социализация.*